# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 06 » հուլիսի 2020թ. № 69-Ա

### ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Արմեն Արշակի Դավթյանի կողմից ներկայացված դիմումը.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Լուծել՝ 2004թվականին Արմեն Արշակի Դավթյանի կողմից 99 տարի ժամկետով, Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղում գտնվող «Խոտերի թումբ» կամրջին հարակից ոչ գյուղատնտեսական նշանակության 0.35 հա մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիրը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2020թ. հուլիսի 06
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

« 10 » հուլիսի 2020թ. № 70-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2020թ. հուլիսի 21-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով՝ համաձայն հավելվածի:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ
**2020թ. հուլիսի 10**
**գ. Լոռի Բերդ**

Նախագիծ

# ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

**Անցկացման վայրը.** Լոռի Բերդի համայնքապետարան

**Անցկացման ժամանակը.** 21.07.2020թ. ժամը 11:00-ին

1) Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

**1. 1.** Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2020թ. հուլիսի 21-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2020թ. հուլիսի 21-ի նիստի օրակարգի հաստատում:

(**Զեկուցող Ա. Ներսիսյան**)

**2)** Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեի կատարման 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ի գիտություն ընդունելու վերաբերյալ:

(**Զեկուցող Ա. Ներսիսյան**)

**3)** Լոռի Բերդ համայնքի 2020թ. հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

(**Զեկուցող Ք. Մելիքջանյան**)

**4)** Լոռի Բերդ համայնքի Լեջան գյուղի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտավայրը վարձակալության տրամադրելու վերաբերյալ

(**Զեկուցող Ք. Մելիքջանյան**)

**5)** Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի բնակիչին համայնքի 2020թ. բյուջեից գումար տրամադրելու վերաբերյալ

(**Զեկուցող Լ. Մովսիսյան**)

**6)** Լոռի Բերդ Լոռի Բերդ համայնքի կողմից 2020թթ. ձեռք բերված գույքը Լոռի Բերդ համայնքի 2020թ. գույքի սեփականության ցանկի մեջ ընդգրկելու վերաբերյալ

(**Զեկուցող Լ. Մովսիսյան**)

**7)** Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի և բազմաֆունկցիոնալ էքսկավատորի մատուցած ծառայությունների սակագները հաստատելու և Լոռի Բերդ համայնքի ավագանու 19.04.2019թ. թիվ 16-Ա , 20.09.2019թ. թիվ 40-Ա, 27.12.2019թ. թիվ 60-Ա, 12.07.2019թ. թիվ 30-Ա և 19.05.2020թ. թիվ 23-Ա որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին

(**Զեկուցող Լ. Մովսիսյան**)

8) Լոռի Բերդ համայնքի 2020թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

(**Զեկուցող Լ. Մովսիսյան**)

**2.** Ելույթներ, առաջարկություններ:

**3.** Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ